

ՀԻՎԱՆԴ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ


1. Յուրաքանչյուր հիվանդ երեխա ու դեռահաս ունի հիվանդանոցում կամ տանն ուսուցման իրավունք, նաև այն դեպքում, երբ բուժում է ստանում ոչ իր հայրենիքում:
2. Հիվանդ երեխաների և դեռահասների ուսուցման նպատակը կրթության շարունակականության ապահովումն է, ինչը թույլ է տալիս նրանց պահպանել աշակերտ լինելու իրենց դերը:
3. Հիվանդանոցային դպրոցը ստեղծում է երեխաների և դեռահասների համայնք և կարգավորում է առօրյա կյանքը: Հիվանդանոցային կրթությունը պետք է կազմակերպվի դասարանի, խմբային կամ անհատական աշխատանքի ձևով, ինչպես նաև հիվանդի անկողնու կողքին:
4. Համագործակցելով երեխայի հիմնական դպրոցի հետ՝ հիվանդանոցային և տնային ուսուցումը պետք է հարմարեցվի երեխայի կամ դեռահասի կարիքներին և կարողություններին:
5. Ուսումնական միջավայրն ու կառույցները պետք է հարմարեցվեն հիվանդ երեխայի կամ դեռահասի կարիքներին: Մեկուսացումը կանխելու համար պետք է օգտագործել հաղորդակցման տեխնոլոգիաներ:
6. Պետք է օգտագործվի ուսուցման մեթոդների և ռեսուրսների բազմազանություն: Բովանդակությունը ներառում է ավելին, քան ֆորմալ կրթական ծրագրին հետևելը: Այն ներառում է առարկաներ, որոնք կապված են հատուկ կարիքների հետ և բխում են հիվանդությունից և հոսպիտալացումից:
7. Հիվանդանոցային և տնային ուսուցման ուսուցիչները պետք է բարձր որակավորում ունենան և ստանան հետագա վերապատրաստում:
8. Հիվանդ երեխաների և դեռահասների ուսուցիչները խնամատար բազմամասնագիտական թիմի լիիրավ անդամ են և ապահովում են հոսպիտալացված երեխայի կամ դեռահասի և նրա հիմնական դպրոցի միջև կապը:
9. Ծնողներին պետք է տեղեկացնել երեխայի կրթության իրավունքի և իրենց հիվանդ երեխայի կամ դեռահասի ուսումնական ծրագրի մասին: Նրանց պետք է ճանաչել որպես ակտիվ և պատասխանատու գործընկերներ:
10. Երեխայի կամ դեռահասի ամբողջականությունը պետք է հարգել ներառյալ բժշկական գաղտնիությունն ու անձնական համոզմունքները: անձնական համոզմունքները:

Սա HOPE-ի կանոնադրությունն է:

Ընդունվել է HOPE-ի ընդհանուր ժողովի կողմից, Բարսելոնա, մայիսի 20, 2000թ.:

Փոփոխությունը հաստատվել է HOPE-ի ընդհանուր ժողովի կողմից, Վիեննա, մայիս 13, 2016:

(Armenian version of the Charter of HOPE)



www.hospitalteachers.eu